Եղիշե Չարենց

Վահան Տերյանի հիշատակին

I

Վահան Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո,
Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո:
Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,
Քամին բերե թող մահվան բոթ ու անձրևը լա:
Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահան Տերյան, քո անցած ուղին
Ու մշուշում տխո՛ւր երգով բյուրավոր զանգեր
Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու ընկեր...

II

Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու,
Ու լռել է երգը քո արդեն հիմա,
Բայց զգում է սիրտս, որ նորի՛ց կգաս դու,
Երբ իջնի գիշերը ու անձրևը լա:

Երբ իջնի գիշերը ու անցած հուշերը,
Անցածի փշերը դառնորեն խոցեն
Ո՛րբ, մենակ կգաս դու և կերգես քո սերը,
Որ վերջի՛ն մեր սերն է աշխարհում գուցե:

Որբ, մենակ կգաս դու և նորից քո երգը
Կվառե սրտում մեր կարոտանք ու սեր.
Անարև սրտում մեր կվառե քո երգը
Երազներ անմար ու ցնորքներ լուսե:

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մո՛տ ես,
Մորմոքող հրի՛ պես մեր հիվանդ արյան,
Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ, հեռու ընկեր իմ, օ, Վահան Տերյան...

III

Դու լուսե, անցար ու չկաս:
Դու թեթե, անմարմին, անծիր:
Դու ուրի՛շ խնդության երազ:

Դու սրտում մեր ընդմիշտ վառեցիր
Կրակներ անմար ու թաքուն:
Փռեցիր լուսավոր գանձեր:

Եվ երբե՛ք, երբեք չի աղոտի
Քո կանթեղը խավար մեր հոգում
Քո կանթեղը հեռո՛ւ կարոտի: